Հավելված N 3
ՀՀ կառավարության 2019 թվականի
դեկտեմբերի 19-ի N 1886-Լ որոշման

ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 2023-2026 ԹԹ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Ուղղություն	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Կատարող	Համակատարող(ներ)	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուրը
1	Ինտենսիվ բուսաբուծություն	1.1 Հավաստագրված սերմերի, սածիլի և տնկանյութի արտադրության խթանում՝ գիտական կենտրոնների, գրանցված սերմարտադրողների և տնկարանների միջոցով	Գիտական կենտրոնների և սերմնաբուծական տնտեսությունների կարողությունների հզորացում, թվով 2 սածիլանոցների հիմնում, 2023թ. մշակվել է սածիլանոցի հիմնման և բանջարաբոստանային մշակաբույսերի սերմադաշտում կաթիլային ոռոգման համակարգի ներդրման ծրագիր, 2025թ.-ին նախատեսվում է հիմնել ևս մեկ սածիլանոց, թվով 2 տնկարանային տնտեսությունների արդիականացում 2024 և 2025 թվականներին, 2023թ.-ին 2000 քմ մակերեսով ջերմատան հիմնման արդյունքում յուրաքանչյուր տարի տնկանյութի աստիճանական բազմացման միջոցով 2027թ.-ին արդեն գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար 3000 տոննա A դասի տնկանյութի, 2024-2026թթ. յուրաքանչյուր տարի 10 000 տոննա հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի, բազմամյա խոտաբույսերի և 0,5 տոննա բանջարաբոստանային մշակաբույսերի սերմերի, թվով 600 հազար հատ սածիլի հասանելիության և	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)	2023-2026 թթ.	օրենքով չարգելված աղբյուրներ 100 մլն ՀՀ դրամ

			պարենային անվտանգության ապահովում, արտադրողականության աճ և արտադրանքի որակի բարձրացում				
		1.2 Սերմարտադրող տնտեսությունների տեխնիկական հագեցվածության գնահատում, առաջարկությունների մշակում և համապատասխան տեխնիկական հագեցվածության ապահովում	2024 թվականին սերմարտադրող տնտեսությունների տեխնիկական հագեցվածության վերաբերյալ լիարժեք տեղեկատվության և 2024 թվականից սկսած դրանց վերաբերյալ առաջարկությունների առկայություն, աստիճանաբար տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացում	Էկոնոմիկայի նախարարություն		2023-2026 թթ.	օրենքով չարգելված աղբյուրներ (միջազգային դոնոր կազմակեր-պություններ) տեխնիկական հագեցվածության գնահատում և առաջարկություն-ների մշակում՝ 8.8 մլն ՀՀ դրամ, (տեխնիկական հագեցվածության ապահովման ծախսը հնարավոր կլինի ներկայացնել գնահատումից հետո)
		1.3 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում	Բուսասանիտարական կայուն իրավիճակի ապահովում	Էկոնոմիկայի նախարարություն	Մարզպետների աշխատակազմեր	2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Շուրջ՝ 108.6 մլն ՀՀ դրամ
		1.4 Բույսերի սորտերի պահպանության միջազգային միությանը (UPOV) ՀՀ անդամակցության ապահովում	Տեղական սելեկցիայի և սերմնաբուծության զարգացման համար նոր հնարավորությունների ստեղծում, մտավոր սեփականության պահպանության երաշխավորություն, ներդրումների աճ	Էկոնոմիկայի նախարարություն		2023թ.	ֆինանսավորում չի պահանջում
		1.5 Առավել վտանգավոր	Կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ռիսկերի կանխարգելման և կառավարման	Էկոնոմիկայի նախարարություն	Սննդամթերքի անվտանգության	2023-2026 թթ.	ֆինանսավորում չի պահանջում

		հիվանդությունների և վնասատուների բռնկումների կանխարգելման և կառավարման արագ արձագանքման միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծում	նպատակով «Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների կանխարգելման և կառավարման արագ արձագանքման միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա աշխատակարգը հաստատելու մասին» իրավական ակտի ընդունում		տեսչական մարմին		
		1.6 Տնկանյութի հավաստագրման ամբողջական համակարգի, այդ թվում հավաստագրման գործընթացների թվայնացման համակարգի ներդրում և կիրարկում	Սերմերի, սածիլի և տնկանյութի արտադրության խթանման միջոցով պարենային անվտանգության ապահովում, որակյալ տնկանյութի հասանելիության ապահովում	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2026 թթ.	օրենքով չարգելված աղբյուրներ 43 մլն ՀՀ դրամ
		1.7 Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի իրականացում	Տարեկան շուրջ 1000 հա մակերեսով ինտենսիվ այգիների հիմնում, պտղատու մշակաբույսերի արտադրողականության բարձրացում և համախառն արտադրանքի աճ, կարկտապաշտպան ցանցերով այգիների տարածքների ավելացում	Էկոնոմիկայի նախարարություն		2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Շուրջ՝ 6 մլրդ ՀՀ դրամ
		1.8 Խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծում, գործարկում, ազգային գեոպորտալում արտացոլելու նպատակով թեմատիկ շերտերի ստանդարտի մշակում, ինտեգրում Կադաստրի կոմիտեի կողմից վարվող ազգային գեոպորտալին	«Խաղողի տնկարկների ռեեստր» ամբողջական համակարգի գործարկում Շուրջ 13000 հա մակերեսով տնկարկների ագրոնոմիական անձնագրերի ստեղծում Շուրջ 12000 խաղողագործ ֆերմերների տվյալների բազայի ստեղծում և համալրում	Էկոնոմիկայի նախարարություն	Կադաստրի կոմիտե «ՀՀ խաղողագործության և գինեգործության» հիմնադրամ (համաձայնությամբ)	2023-2026 թթ. 2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2026թ. (շարունա-կական)	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի օրենքով չարգելված այլ աղբյուրներ Շուրջ՝ 150 մլն ՀՀ դրամ

			Խաղողի մթերման գործընթացում ընդգրկված նվազագույնը 30 գինեգործական ընկերություններում ներդրված համակարգ Թեմատիկ շերտերի ինտեգրում Կադաստրի կոմիտեի կողմից վարվող ազգային գեոպորտալին			2025-2026 թթ. շարունա-կական 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
		1.9 Աջակցություն ջերմատնային տնտեսությունների հիմնմանը	Տարեկան շուրջ 10 հա ջերմատնային տնտեսությունների հիմնմանն աջակցություն	Էկոնոմիկայի նախարարություն		2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի օրենքով չարգելված այլ աղբյուրներ (միջազգային դոնոր կազմակերպություն-ներ) Շուրջ՝ 5.5 մլրդ ՀՀ դրամ
		1.10 Սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ զբաղվող սուբյեկտների և տնտեսությունների մասնագիտական կարողությունների հզորացում	Սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ զբաղվող սուբյեկտների և տնտեսությունների վերապատրաստված անձնակազմերի առկայություն: Սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ զբաղվող տնտեսավարողների համար յուրաքանչյուր տարի (2023-2026 թթ.) 4 դասընթացների (առկա կամ հեռավար) կազմակերպում, ըստ մշակաբույսերի խմբերի՝ հացահատիկային, հատիկաընդեղեն, բանջար-բոստանային մշակաբույսերի և կերաբույսերի սերմնաբուծության առանձնահատկությունների,	Էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)	2023-2026 թթ.	օրենքով չարգելված աղբյուրներ (միջազգային դոնոր կազմակերպություն-ներ) Շուրջ՝ 20 մլն ՀՀ դրամ

			սերմնադաշտերի ագրոտեխնիկայի և ապրոբացիայի վերաբերյալ (յուրաքանչյուր խմբում՝ 10-15 մարդ): Մասնագիտական կարողությունների բարձրացման դասընթացների մասնակիցներին հավաստագրերի տրամադրում				
		1.11 Ռեսուրսախնայող գյուղատնտեսության վերաբերյալ գյուղացիական տնտեսությունների մասնագիտական կարողությունների հզորացում և իրազեկվածության բարձրացում	Ռեսուրսախնայող գյուղատնտեսության վերաբերյալ գյուղացիական տնտեսությունների մասնագիտական կարողությունների հզորացման և իրազեկվածության բարձրացմանն ուղղված դասընթացների իրականացում՝ ըստ գյուղատնտեսական գոտիների խմբավորման (4 խմբեր) և հիմնական մշակաբույսերի տեխնոլոգիական ընդհանրության: Արդյունքում կներկայացվեն հողի անվար և նվազագույն մշակության, ոռոգման արդիական, բույսերի պաշտպանության գործընթացում ԱԹՍ կիրառման տեխնոլոգիաները: Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսումնափորձնական տնտեսություններում, ըստ անհրաժեշտության, որպես գործնական ցուցադրություն յուրաքանչյուր տարի (2023-2026թթ.) գարնանը 1 հա-ի վրա դրանց իրականացման տարբերակների ներկայացում: Գյուղատնտեսական միևնույն հողատարածքի բազմակի օգտագործման տեխնոլոգիաների ներկայացում տարբեր վեգետացիոն ժամանակահատված ունեցող մշակաբույսերի կիրառմամբ: Յուրաքանչյուր տարի (2024-2026 թթ.) մեկական դասընթացի կազմակերպում	Էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)	2023-2026 թթ.	օրենքով չարգելված աղբյուրներ (միջազգային դոնոր կազմակերպություն-ներ) 43.6 մլն ՀՀ դրամ
		1.12 Աջակցություն ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության	Գյուղացիական տնտեսությունների և սպառողների իրազեկվածության բարձրացում օրգանական արտադրության	Էկոնոմիկայի նախարարություն	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	2024-2026 թթ.	օրենքով չարգելված աղբյուրներ

		զարգացմանը	և արտադրանքի վերաբերյալ, ՀՀ-ում օրգանական արտադրության տարածքների ընդլայնում, հայկական օրգանական արտադրանքի ճանաչելիության մեծացում				(միջազգային դոնոր կազմակերպու-թյուններ) Ծուրջ՝ 527.4 մլն ՀՀ դրամ
		1.13 Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրում	Հողերի շուկայի զարգացում, գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործման և մասնատվածության մակարդակի նվազեցում, մասնավորապես մինչև 2026 թվականի ավարտը մինչև 400 հա-ի միավորված հողատարածքների առկայություն	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Կադաստրի կոմիտե Ջրային կոմիտե	2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի օրենքով չարգելված այլ աղբյուրներ (միջազգային դոնոր կազմակերպու-թյուններ) Ծուրջ՝ 445 մլն ՀՀ դրամ
		1.14 Ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման խթանում և տարածում	Պետական աջակցությամբ խթանել տարեկան շուրջ 1000 հա տարածքում ոռոգման արդիական համակարգերի ներդրմանը և ջրավազանների կառուցմանը կամ ընդլայնմանը, որը հնարավորություն կտա ապահովել ջրի խնայողությամբ բարձր արդյունավետություն, ջրախնայող տեխնոլոգիաներով ցուցադրական տեղամասերի հիմնում	Էկոնոմիկայի նախարարություն	Ջրային կոմիտե «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)	2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Ծուրջ՝ 375 մլն ՀՀ դրամ
		1.15 Գյուղատնտեսության ապահովագրության ծրագրի իրականացում, մոնիթորինգ և գնահատում, նոր պրոդուկտների և համակարգային	Գյուղատնտեսությունում աղետների դեպքում վնասների հատուցման շնորհիվ տնտեսավարողների ռիսկերի մեղմում, ապահովագրվող մշակաբույսերի տարածքների ավելացում	Էկոնոմիկայի նախարարություն	Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալություն ՀԿ (համաձայնությամբ), Կենտրոնական բանկ (համաձայնությամբ),	2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի օրենքով չարգելված այլ

		մեխանիզմների մշակում			Ապահովագրական ընկերություններ (համաձայնությամբ)		աղբյուրներ (միջազգային դոնոր կազմակեր-պություններ) Շուրջ՝ 3.0 մլրդ ՀՀ դրամ
		1.16 Վտանգավոր հիդրոօդերևութաբա-նական երևույթների կանխատեսման և վաղօրոք նախազգուշացման համակարգի հիմնում	Ընդարձակված ռադիոլոկացիոն դիտարկումների ցանց, դիտարկումների տվյալների հավաքման արդյունավետ և այժմեական համակարգ, որը հնարավորություն կտա բարելավել համակարգի գործունեության հիմնական ուղղություններով գործող պարտավորությունների կատարումը, ՀՀ հիդրոօդերևութաբանական անվտանգության ապահովման բարելավում	Շրջակա միջավայրի նախարարություն		2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի օրենքով չարգելված այլ աղբյուրներ (միջազգային դոնոր կազմակերպու-թյուններ) Շուրջ՝ 3.6 մլրդ ՀՀ դրամ
		1.17 Փոփոխվող բնակլիմայական պայմաններում ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում	Ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում՝ ելնելով փոփոխվող բնակլիմայական պայմաններից, առաջարկվող մշակաբույսերի արդյունավետ մշակության վերաբերյալ կազմված ուղեցույցներ	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)	2024-2026 թթ.	օրենքով չարգելված աղբյուրներ (միջազգային դոնոր կազմակերպու-թյուններ) Շուրջ՝ 30 մլն ՀՀ դրամ
		1.18 Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի թարմացման միջոցառման իրականացում	Տարեկան շուրջ 500 միավորով գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի նորացում	Էկոնոմիկայի նախարարություն		2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Շուրջ՝ 3.0 մլրդ ՀՀ դրամ

		1.19 Կարկտապաշտպան ցանցերի ներդրմանն աջակցություն	Ինտենսիվ այգիների շուրջ 100 հա հողատարածքում կարկտապաշտպան ցանցերի ներդրում	Էկոնոմիկայի նախարարություն		2025-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Շուրջ՝ 250 մլն ՀՀ դրամ
		1.20 Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման ծրագրի մշակում և իրականացում	Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրում	Էկոնոմիկայի նախարարություն		2025-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Շուրջ՝ 200 մլն ՀՀ դրամ
		1.21 Կերարտադրության խթանում, մասնավորապես՝ անասնակերի արտադրության, այդ թվում հիդրոպոնիկ եղանակով, ծավալների ավելացման նպատակով կերային մշակաբույսերի մշակության խրախուսում	Հանրապետությունում կերային մշակաբույսերի ցանքատարածությունների 10- 15%-ով ընդլայնում, անասնակերի կայուն բազայի ստեղծում, բնական ռեսուրսների արդյունավետ և լիարժեք օգտագործում, կենդանական ծագման արտադրանքի ծավալների աճ, տարեկան շուրջ 700-750 հազ. տոննա խոտի և կանաչ (վերամշակված չոր խոտի) կերի արտադրության կազմակերպում	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն	2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի օրենքով չարգելված այլ աղբյուրներ Շուրջ՝ 400 մլն ՀՀ դրամ
		1.22 Արոտավայրերի բարելավման միջոցառումների իրականացում	□ Ենթակառուցվածքների ստեղծում (ճանապարհների բարեկարգում, ջրախմոցներ, հովվի կացարան, գիշերակացի մակատեղեր, մեքենայացված կթի սրահ և այլն), □ Արոտային անասնապահությամբ զբաղվող տնտեսավարողների և համայնքների կարողությունների զարգացում, □ Արոտների կայուն կառավարմանն ուղղված	Էկոնոմիկայի նախարարություն Շրջակա միջավայրի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	2025-2026 թթ. շարունա-կական	օրենքով չարգելված աղբյուրներ Շուրջ՝ 440 մլն ՀՀ դրամ

			իրավական ակտերի մշակում, □ Դեգրադացված արոտավայրերի և խոտհարքների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում (ենթացանք արոտավայրերի խոտախառնուրդներով)		(համաձայնությամբ)		
2	Ինտենսիվ անասնաբուծություն, այդ թվում՝ տոհմային	2.1 Տոհմային անասնաբուծության զարգացում՝ տոհմային կենդանիների ձեռք-բերման աջակցության ծրագրերի իրականացում. «Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-2028թթ. ծրագիր» «Մթերատվության բարձրացման փորձնական ծրագիր» «Հայաստանի Հանրապետությունում 2025-2029 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր»	«Հանրապետության տավարի նախիրներում և ոչխարի հոտերում տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացում 1,5-2% (տարեկան 500-600 գլուխ տոհմային ԽԵԿ և ՄԵԿ), տոհմային կենդանիների (տավար, ոչխար) ներկրման գործընթացի շարունակականության ապահովում, ներկրված կենդանիների տեղական վերարտադրության կազմակերպում, մաքրացեղ բուծման միջոցով-միջցեղային տրամախաչումների շնորհիվ հայրենական ցեղերի կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավում, անասնաբուծական արտադրանքի հավելյալ արտադրության խթանում, տոհմային կենդանիների վաճառքի մշակույթի ներդրում»:	Էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)	2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրերի Շուրջ՝ 1.15 մլրդ ՀՀ դրամ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		2.2 «Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-2026 թվականների ծրագիր»	Ներդրումային ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով արդյունաբերական խեցգետնաբուծության ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, արհեստական եղանակով խեցգետնի արտադրության ծավալների ավելացում	Էկոնոմիկայի նախարարություն		2024-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Շուրջ՝ 392.0 մլն ՀՀ դրամ
		2.3 «Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագիր»	Ծախսերի 50 □ փոխհատուցման միջոցով արտադրվող բարձրորակ ապրանքային մեղրի քանակի ավելացում	Էկոնոմիկայի նախարարություն		2024-2025 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված

							ծրագրի Ծուրջ՝ 280.0 մլն ՀՀ դրամ
		2.4 Կենդանիների նույնականացման համակարգի ներդրում և բարելավում	Հանրապետության ամբողջ տարածքով ԽԵԿ-ի և ՄԵԿ-ի տեղաշարժի վերահսկում և հետագծելիության բարելավում, նախրի կառավարում և տոհմասելեկցիոն լայնածավալ աշխատանքների կազմակերպման համար նախադրյալների ստեղծում, կայուն անասնահամաճարակային իրավիճակ՝ կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների կանխարգելման նոր արդյունավետ համակարգի և հետագծելիության ապահովման նոր մեխանիզմի ներդրում: Նախատեսվում է 2023 թվականին՝ 686500, 2024 թվականին՝ 195400, 2025 թվականին՝ 1 344 011, 2026 թվականին՝ 1 344 011 հատ համարակալում	Էկոնոմիկայի նախարարություն	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Մարզպետների աշխատակազմեր	2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Ծուրջ՝ 1.2 մլրդ ՀՀ դրամ
		2.5 «Խելացի» անասնաշենքերի կառուցմանը կամ վերակառուցմանը և դրանց տեխնոլոգիական ապահովմանն աջակցություն	Պետական աջակցությամբ ժամանակակից, ինտենսիվ տեխնոլոգիաներով հագեցած անասնաշենքերի կառուցման խթանում, ինչը կնպաստի կենդանիների պահվածքի պայմանների բարելավմանը՝ արդյունքում բարձրացնելով կենդանիների մթերատվության ցուցանիշները 2023թ.՝ 21, 2024թ.՝ 10, 2025թ.՝ 10, 2026թ.՝ 15	Էկոնոմիկայի նախարարություն		2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Ծուրջ՝ 747.9 մլն ՀՀ դրամ
		2.6 «ՀՀ-ում գյուղատնտեսական կենդանիների բրուցելոզ հիվանդության	«Մեկ առողջություն» գաղափարի համատեքստում և սահմանված չափանիշներով գործադրել միասնական մոտեցումներով միջոցառումների ծրագիր, որոնք ուղղված են Հայաստանում	Էկոնոմիկայի նախարարություն	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Տարածքային	2023-2026 թթ	ֆինանսավորում չի պահանջում

		վերահսկմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների ծրագրի մշակում	բրուցելոզի դեմ պայքարին, հսկողությանը և կանխարգելմանը: Իրականացվում է գյուղատնտեսական կենդանիների բրուցելոզի դեմ պայքարի միջոցառում «Ցտեսություն բրուցելոզ. Հայաստանում բրուցելոզի կանխարգելման, հայտնաբերման և հսկողության համապարփակ մոտեցում» ծրագրի շրջանակներում		կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Մարզպետների աշխատակազմեր		
		2.7 Անասնաբուժական դեղամիջոցների (հատկապես հակաբիոտիկների) շրջանառության կարգի մշակում	«Գործող անասնաբուժական դեղատներում անասնաբուժական դեղամիջոցների շրջանառության վերահսկողության նոր մեխանիզմների ապահովում՝ անասնաբուժական դեղատնային գործունեության, անասնաբուժական դեղատներում հակաբիոտիկների իրացումը դեղատոմսով, դեղատոմսեր գրելու, բաց թողնելու (ներառյալ՝ էլեկտրոնային եղանակով) վերաբերյալ»:	Էկոնոմիկայի նախարարություն	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	2025-2026 թթ. շարունա-կական	ֆինանսավորում չի պահանջում
3	Պարենային և սննդամթերքի անվտանգության ապահովում, ագրովերամշակման ոլորտի զարգացում, թվային տեխնոլոգիաների ներդրում	3.1 Աշխարհագրական նշումների մասին օրենքի բարելավում և ավելի քան 10 անվանում հայկական աշխարհագրական նշումներով արտադրանքի գրանցում	Աշխարհագրական նշումների մասին բարելավված օրենքի միջոցով ոլորտային ասոցիացիաների ստեղծման խթանում և յուրաքանչյուր տարի 2-3 անվանում հայկական նշումներով արտադրված և գրանցված արտադրանք	Էկոնոմիկայի նախարարություն	«ՀՀ խաղողա-գործության և գինեգործության» հիմնադրամ (համաձայնությամբ) Ոլորտային միություններ և ասոցիացիաներ (համաձայնությամբ)	2023-2026 թթ.	օրենքով չարգելված աղբյուրներ
		3.2 Հայաստանի գինիների առաջխաղացում	Նվազագույնը 5 միջազգային ցուցահանդեսներին մասնակցություն, 50 և ավել տեղական և միջազգային մամուլում տպագրված հոդվածներ, 40 և ավել համտեսներ, շնորհանդեսներ գինու արտահանման տարեկան նվազագույնը 30 % աճ	Էկոնոմիկայի նախարարություն	«ՀՀ խաղողա-գործության և գինեգործության» հիմնադրամ (համաձայնությամբ)	2023-2026 թթ. շարունա-կական	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի օրենքով չարգելված այլ աղբյուրներ Շուրջ՝ 1.5 մլրդ ՀՀ

							դրամ
		3.3 ՀՀ ԷՆ աշխատակիցների և գյուղացիական տնտեսությունների կարողությունների հզորացում գյուղատնտեսության ոլորտում առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման և կլիմայի փոփոխության համատեքստում	«Հայաստան-Ռոզվող գյուղատնտեսության զարգացում Արարատի և Արմավիրի մարզերում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մասնագիտական հմտությունների և տեխնիկական գիտելիքների (know-how) մակարդակի բարձրացում, մասնագիտացված դասընթացների կազմակերպում 2023թ.՝ 20, 2024թ.՝ 80, 2025թ.՝ 80, 2026թ.՝ 80 քաղաքացու համար և իրազեկվածության մակարդակի բարձրացում՝ կլիմայի փոփոխության, դրա բացասական ազդեցության, ինչպես նաև բացասական ազդեցությունը մեղմող կամ կանխարգելող միջոցառումների վերաբերյալ	Էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)	2023-2026 թթ.	օրենքով չարգելված աղբյուրներ Ծուրջ՝ 588 մլն ՀՀ դրամ
		3.4 Մասնագիտական խորհրդատվական խմբերի ձևավորում և խորհրդատվական ծառայության տրամադրում գյուղացիական տնտեսավարողներին	Աջակցություն պետական գյուղատնտեսական արդիականացված խորհրդատվական ծառայությունների, երեք գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների թիմերի ստեղծմանն ու գործարկմանը, աջակցություն ֆերմերների ուսուցման ծրագրի ընդլայնմանը	Էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)	2023-2026 թթ.	օրենքով չարգելված աղբյուրներ Ծուրջ՝ 294 մլն ՀՀ դրամ
		3.5 Ագրոպարենային ոլորտի ընկերությունների արտադրական կարողությունների հզորացում և արդիականացում	Տարեկան շուրջ 250 միավոր սարքավորումների ձեռքբերմանն աջակցություն	Էկոնոմիկայի նախարարություն		2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Ծուրջ՝ 12.8 մլրդ ՀՀ դրամ
		3.6 Հումքի մթերման գործընթացին աջակցություն	Հումքի մթերման և թողարկվող արտադրանքի ծավալների տարեկան մինչև 10 %-ով ավելացում և հումքի մթերման պայմանագրային հարաբերությունների խորացում	Էկոնոմիկայի նախարարություն		2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված

							ծրագրի Շուրջ՝ 13.9 մլրդ ՀՀ դրամ
		3.7 Հետբերքահավաքային կարողությունների հզորացում (օրինակ՝ սառնարանային տնտեսություններ, պահեստներ, լոգիստիկ կենտրոններ և այլն)	Տարատեսակ լոգիստիկ և շուկայավարման նպատակով հիմնված կենտրոններ (hubs)՝ առնվազն 2 հատ և ավելացված սառնարանային տնտեսություններ ու բարելավված կարողություններ	Էկոնոմիկայի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի օրենքով չարգելված այլ աղբյուրներ Շուրջ՝ 1.2 մլրդ ՀՀ դրամ
		3.8 Սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով HACCP (վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկում) սննդի անվտանգության կառավարման համակարգի կամ ISO 22000 ստանդարտի ներդրման աջակցության ծրագրի մշակում	Սննդամթերքի անվտանգության ապահովում	Էկոնոմիկայի նախարարություն	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Մասնավոր հատված (համաձայնությամբ)	2023-2026 թթ.	ֆինանսավորում չի պահանջում
		3.9 Գյուղատնտեսության ոլորտում սուբսիդավորման նոր մեխանիզմների մշակում և ներդրում	2023-2024թթ. սուբսիդավորման մեխանիզմների միջազգային փորձի ուսումնասիրում և առնվազն 1 նոր մեխանիզմի մշակում, 2024-2026թթ. սուբսիդավորման առնվազն 1 նոր մեխանիզմով պետական աջակցության տրամադրում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին	Էկոնոմիկայի նախարարություն		2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի օրենքով չարգելված այլ աղբյուրներ

							Ծուրջ՝ 30 մլն ՀՀ դրամ
		3.10 Ագրոպարենային համակարգում ժամանակակից հմտությունների և կարողությունների զարգացում գյուղական բնակավայրերի պատանիների և երիտասարդների համար	Էկոնոմիկայի նախարարության կողմից ՀՀ մարզերում պատանիների և երիտասարդների շրջանում գյուղատնտեսական գործունեության և համապատասխան կրթության գրավչության բարձրացման նպատակով նրանց համար մասնագիտական կողմնորոշման դասընթացների, սեմինարների անցկացման կազմակերպում՝ նախարարության և ուսումնական կազմակերպությունների (համաձայնությամբ) համապատասխան մասնագետների ներգրավմամբ (տարեկան շուրջ 10 սեմինար)	Էկոնոմիկայի նախարարություն	Գյուղատնտեսական և գյուղատնտեսական մասնագիտություններով ուսուցում իրականացնող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական կազմակերպություններ (համաձայնությամբ) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)	2024-2026 թթ. շարունա-կական	Օրենքով չարգելված աղբյուրներ
		3.11 Գյուղատնտեսական աջակցության ծրագրերի իրականացման ընթացակարգի թվայնացում	Մշակել տեխնիկական առաջադրանք՝ միասնական հարթակի/բջջային հավելվածի ստեղծման համար, որի միջոցով տնտեսավարողները հնարավորություն կունենան ներկայացնել գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերին մասնակցության էլեկտրոնային դիմում՝ կցելով ծրագրով պահանջվող անհրաժեշտ տեղեկատվությունը, փաստաթղթերը և հողամասի տեղադիրքը (ինչը հնարավորություն կտա տեսնել ծրագրերով հողամասին ներկայացվող պահանջներին համապատասխանությունը (օրինակ՝ չափերի և ձևի, տարածում հողի ագրոքիմիական անալիզի արդյունքների և այլ տեղեկատվության համապատասխանություն իրականությանը), ինչպես նաև՝ տեղում իրականացվող մոնիթորինգի	Էկոնոմիկայի նախարարություն	Կադաստրի կոմիտե Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2024-2026 թթ. շարունա-կական	օրենքով չարգելված աղբյուրներ Ծուրջ՝ 50 մլն ՀՀ դրամ

			փաստաթղթերի և այլ տեղեկատվության գեներացում համապատասխան շտեմարաններում՝ ինքնաշխատ հաշվետվությունների կազմման հնարավորությամբ Պահանջվող ծրագրային ապահովման մշակում և շարունակական սպասարկում				
		3.12 Գյուղատնտեսությունում տնտեսավարողների, մասնավորապես խաղողագործների հաշվառման համակարգի ստեղծում և վարում	Գյուղատնտեսությունում տնտեսավարողների, մասնավորապես խաղողագործների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և հաշվառման համակարգի առկայություն	Էկոնոմիկայի նախարարություն		2025-2026 թթ. շարունա-կական	օրենքով չարգելված աղբյուրներ 30 մլն ՀՀ դրամ
		3.13 Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման միջոցառման իրականացում	□ Ընտրված համայնքներում համայնքային ակտիվների քանակի առնվազն 10 միավորով ավելացում՝ աջակցելու կայուն գյուղական կենսաապահովմանը □ վերականգնվող էներգիայի աղբյուրների և ցածր արտանետումներով կլիմայական խելացի գյուղատնտեսական պրակտիկայի ապահովում □ 230 թիրախային տնային տնտեսությունների, որոնցից 46-ը գլխավորում են կանայք, տարեկան եկամտի 20%-ով ավելացում	Էկոնոմիկայի նախարարություն		2024-2026 թթ.	օրենքով չարգելված աղբյուրներ՝ Ծուրջ՝ 1.2 մլրդ դրամ
		3.14 «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Գյուղատնտեսության ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման նախադրյալների ստեղծում, «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագծի առկայություն	Էկոնոմիկայի նախարարություն		2026թ.	օրենքով չարգելված աղբյուրներ
		3.15 Գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում	Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների գիտականորեն հիմնավորված ռիսկերի վերլուծություն և դրանց հիման	Էկոնոմիկայի նախարարություն	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	2023-2026 թթ.	ֆինանսավորում չի պահանջում

		իրականացնելու լիազորություններ տալու, կասեցնելու կամ դադարեցնելու կարգի մշակում	վրա որոշումների կայացում		Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)		
		3.16 Գյուղատնտեսության թեմատիկ շերտերի ստեղծում, վարում և ընդլայնում, ինտեգրում Կադաստրի կոմիտեի կողմից վարվող ազգային գեոպորտալին	Գյուղատնտեսության թեմատիկ շերտերի առկայություն	Էկոնոմիկայի նախարարություն	Կադաստրի կոմիտե Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2023-2026 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի օրենքով չարգելված այլ աղբյուրներ 40 մլն ՀՀ դրամ
		3.17 Նվազագույն պարենային զամբյուղը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի առկայություն	Նվազագույն պարենային զամբյուղը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի առկայություն	Էկոնոմիկայի նախարարություն	Առողջապահության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ (համաձայնությամբ)	2026 թվականի դեկտեմ-բերի երկրորդ տասնօրյակ	ֆինանսավորում չի պահանջում
		3.18 Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարող սուբյեկտներին աջակցություն	Ազգաբնակչությանը որակյալ և անվտանգ ԽԵԿ-ի մսեղիքի մատակարարման նպատակով սպանդանոցային մորթի ծավալների ավելացում	Էկոնոմիկայի նախարարություն		2025-2026թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի

		3.19 ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում	Հայրենական արտադրողների և արտադրանքի մրցունակության բարելավված մակարդակ, արտահանման ծավալների ավելացում, թիրախային շուկաներում վերհանված խոչընդոտների վերացում	Էկոնոմիկայի նախարարություն		ՀՀ վարչապետի աշխատա-կազմ ներկայացում 2023 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում) օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		3.20 Տրանսպորտային փոխադրամիջոցների, մեքենասարքավորում-ների ձեռքբերմանը և կապիտալ շինարարության իրականացմանն աջակցություն	Փոխադրումների և լոգիստիկայի զարգացմանն աջակցություն	Էկոնոմիկայի նախարարություն		2023-2024 թթ.	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Շուրջ՝ 2.0 մլրդ ՀՀ դրամ
		3.21 Հաշվետվողականու-թյան ապահովում և ռազմավարության հաշվետվության ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Յուրաքանչյուր տարի հաշվետվության ներկայացում Վարչապետի աշխատակազմ՝ հիմք ընդունելով Վարչապետի 30.12.2021թ. N 1508-Լ որոշմամբ հաստատված՝ «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգի» 5-րդ կետի 7-րդ ենթակետը	Էկոնոմիկայի նախարարություն		2024-2026 թթ.	ֆինանսավորում չի պահանջում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ